865

1. Այս աշխարհում ոչ մի բանով Իմ սիրտը չուրախացավ,
Ցավ, տառապանք ու նեղություն ինձ միայն բաժին հասավ:
Կոտրած սրտով Քեզ եմ գալիս, աղերսում եմ, Փրկի՛չ իմ,
Դու փարատի՛ր իմ վշտերը, մխիթարի՛ր սիրտը իմ:

Քո սերը ինձ ուժ է տալիս,
Հույսով լցնում իմ հոգին,
Վստահությամբ Քեզ եմ գալիս,
Քեզ եմ հանձնում կյանքը իմ:

2. Հիմա Քեզանով եմ ապրում, էլ բնավ չեմ տխրելու,
Ոտքերիդ մոտ միշտ խոնարհված՝ սերդ եմ վայելելու:
Մաքրի՛ր, սրբի՛ր ինձ մեղքերից, աղերսում եմ, Փրկիչ իմ,
Որ հավիտյան ապրեմ Քեզ հետ ու միշտ լինեմ Քո կողքին:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025